ՄԱՐԴԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Ա. Հ.

Մեծ Հայքի թագավորության վարչաքաղաքական բաժանման համակարգի դիտարկումից երևում է, որ դեպի Հայոց միջնաշխարհ՝ արքունի տիրույթ, այն է՝ Այրարատ նահանգ տանող կարևոր ռազմավարական ճանապարհներն անցնում էին նրան սահմանակից գավառներով, որոնց անվան մեջ առկա է մարդ *բառը: Դրանք էին* Մարդաղի[1], Մարդուցայք[2], Մարդաստան[3] *վարչատարածքային միավորները և* Մարդպետական *կոչվող տիրույթը*[4]*: Պատմագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որ նշված տեղանուններն ունեն էթնիկական ծագում և կապված են իրանական ցեղերից մեկի՝ մարդերի անվան հետ, որոնք մարական տիրապետության շրջանում ներթափանցել էին Հայաստան և օգտագործվում էին որպես վարձկան ուժ: Նման եզրակացության համար հիմք են անտիկ հեղինակների հիշատակությունները:*

Յ. Մարկվարտի կարծիքով, մարդերը ժամանակակից քրդերի նախնիներն են, և դրա մասին ակնարկում է արաբ մատենագիր Մասուդին, ըստ որի՝ քրդերի նախահայրը՝ Քուրդը, Մարդի *որդին էր*[5]*: Ենթադրվում է, որ մարդերն ապրել են պատմական Հայաստանի Մարդաստան և Մարդաղի*

---

[1]Մարդաղին *գտնվում էր Տուրուբերանում,* Սրմանց *լեռների հյուսիս-արևմտյան լանջերին (***Երեմյան Ս. Տ.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 65): Հ. Հյուբշմանը գավառանվան մասին հայտնել է հետևյալ կարծիքը. «Մարդ((սովորաբար=մարդ») անուան եզ. սեռականը Մարդոյ+աղի» (***Հյուբշման Հ.,** *Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 380): Ըստ Ն. Ադոնցի՝ «Մարդ-աղի պարզապես նշանակում է Մարդյան» (***Ադոնց Ն.,** *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 69): Ս. Երեմյանի կարծիքով՝ գավառանունը կազմված է* «Մարդ» *ցեղի անունից և* «աղի» *(=alḫi «աղխի») բառից (տե՛ս* **Երեմյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 65):*

[2]Մարդուցայքը *տեղորոշվում է Մակու քաղաքից դեպի արևմուտք, Կոտուրի լեռների արևելյան փեշերին (***Երեմյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 55):*

[3]Մարդաստանը *ընկած էր Տիգրիսի (=Արևելյան Տիգրիս) ակունքներից արևելք (***Claudii Ptolemaei.** *Geographia V,12,9): Գավառանունը մեկնաբանվում է որպես «Ժողովարան մարդկան.*Պարունակ (անուն), կուսաստան, մարդաստան» (***Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973, էջ 222):*

[4] *Մարդպետականը տարածվում էր «յԱտրպատականէ մինչև ցՀուաշ ռոտ և Նախճաւան» (***Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 18): Մեծ Հայքի թագավորության անկումից հետո «Մարդապետական տիրույթները, որպես արքունական տիրույթների մի տարատեսակ, անցնում են Սասանյանների վերահսկողության ներքո» (***Հարությունյան Բ.,** *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 2001, էջ 389):*

[5]*Տե՛ս* **Մանանդյան Հ.,** *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Ե., 1944, էջ 70:*

գավառներում, որոնց տեղորոշման կապակցությամբ, սակայն, կան տարաձայնություններ[6]*:*

Հ. Մանանդյանը վկայակոչում է Մասուդիին՝ նշելով, որ հայ մատենագրության մեջ ևս քրդերն անվանվում են «ազգն մարաց»[7]:

Ն. Մառի կարծիքով՝ հայրիշխանության ժամանակ – mard նշանակել է մարդ *կամ* ամուսին, տղամարդ: *Ավելի վաղ՝ մայրիշխանության շրջանում, բառն արտահայտել է* կին, *մասնավորապես* մայր *իմաստը, որը հայերենում պահպանվել է mayr (<mar-i)*[8] *բառում: Միաժամանակ, mard-pet-ը, ըստ նրա, զուտ ցեղային հասարակական-տնտեսական կազմավորման անվանում է. մարերի mada անվանումը հանգում է mard-ին՝ որպես նախնական ձևի, իսկ նրանց հայերեն անվանումը հենց* մար *է (mada<mar-da/do)*[9]*:*

Ն. Ադոնցը գտնում է, որ մարդերը գաղթել են Ատրպատականից և բնակություն են հաստատել երկու տարբեր վայրերում՝ Մարդաստանում և Մարդաղիում[10]*:*

Է. Դանիելյանը հակված է կարծելու, որ մարդերը Հայկական լեռնաշխարհում հայտնվել են Դարեհ I-ի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը՝ որպես սատրապություն, ընդգրկվեց՝ Աքեմենյանների պետության կազմի մեջ[11]*:*

Մ. Մաքսիմովայի կարծիքով, «Անաբասիսում», հավանաբար, գիտակցվում են մարդերը, որոնք Ստրաբոնի ժամանակներում բնակվում էին Հայաստանում: Պտղոմեոսի համաձայն, նրանք ապրում էին Տիգրիսի ակունքներից արևելք»[12]*: Համանման կարծիք է հայտնել Ս. Կրկյաշարյանը: Նրա համոզմամբ՝ Հերոդոտոսի ու Քսենոֆոնի հիշատակած մարդերը*

---

[6] *Տե՛ս նույն տեղում:*

[7] *Նույն տեղում, էջ 75:*

[8] *Նորայր Բյուզանդացին* մարդպետ *տերմինը մեկնաբանում է* ներքինապետ, *կանանց պետ՝ վկայակոչելով Հին կտակարանում առկա տեղեկությունները, որոնց մեջ* մարդ, մարդիկ *ներկայացված են* կին, կանայք *նշանակությամբ (***Նորայր Բյուզանդացի,** *Կորիւն վարդապետ և թարգմանութիւնք նորին, Տփղիս, 1900, էջ 268):*

[9] **Марр Н. Я.** *Избранные работы, т. V, М.-Л., 1935, с, 487: Նկատենք,որ «Մեդացիները Ամադա անվան տակ առաջին անգամ հիշատակվում են Սալմանասար III-ի ժամանակաշրջանում: 843 թ. այս թագավորը թափանցել է Ամադա երկիրը: Շամշի Ադադը 818 թ. արշավանք է ձեռնարկում Մատայի, այսինքն՝ Մադայի, Մեդիայի դեմ»* **(Ադոնց Ն.,** *Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 296):*

[10] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., էջ 70:*

[11] **Դանիելյան Է.,** *Մարդերի ցեղը հին Հայաստանում (մ.թ.ա. V-մ.թ. I դդ.) [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, - 1, էջ 204]:*

[12] *Տե՛ս* **Ксенофонт.** *Анабасис. Перевод и примечания Максимовой М. Н. Под ред. акад. Толстого И. И., М.-Л., 1951, с. 271, прим. 8.*

տարբեր ցեղեր էին, և վերջիններիս պետք է նույնացնել Ստրաբոնի մոտ հանդիպող մարդերի հետ, որոնք ապրում էին Հայկական լեռնաշխարհում և, ըստ Կլավդիոս Պտղոմեոսի վկայության, բնակվում էին Տիգրիսի ակունքներից արևելք[13]*:*

Ի. Ալիևը ենթադրում է, թե մարդերի նշանակալից մասը ծագմամբ իրանալեզու չէր[14]*: Ըստ Վ. Բարտոլդի՝ մարդերը հաղթվել են Ալեքսանդր Մակեդոնացու, իսկ հետագայում՝ պարթևների կողմից, որոնք նրանց վերաբնակեցրել են Ռեյի շրջակայքում*[15]*:*

Վ. Վարդանյանը, հակադարձելով Հ. Մանանդյանին, նշում է, որ Մարաստանում բնակվել են բազմաթիվ ցեղեր, հետևաբար, «ազգ մարաց» անվանումը չի կարելի միայն քրդերին վերագրել: Միևնույն ժամանակ, հետազոտողը սխալ է համարում մար *և* մարդ *անունների նույնացումը*[16]*:*

Հետաքրքրական է Ա. Մուշեղյանի տեսակետը «մարդպետու-թյուն» գործակալության մասին: Նա կարևորում է այն միտքը, որ մարդպետներին իրանական ծագում վերագրելով՝ հետազոտողներն անտեսել են այն փաստը, որ նրանք հայերի նախնի Հայկի ցեղից էին՝ հին թագավորական սերունդներից: Գիտնականը ենթադրում է, որ «մարդպետը» «մարզպետ» *բառի աղավաղված տարբերակն է*[17]*:*

Բ. Հարությունյանի քննության համաձայն՝ Հայաստանում պարթև Արշակունիների կրտսեր ճյուղի հաստատվելուց հետո ծնունդ առավ մարդպետության գործակալությունը, որը մարդերի ցեղային կազմա-կերպության շնորհիվ դարձավ ներքինացվող առաջնորդների մենաշնորհը: Հետագայում մարդերի ցեղն անհետացավ հայկական միջավայրում, վերացավ և գործակալության պարտադիր հանձնումը մարդ ցեղի ներքինացված նահապետին[18]*:*

Ռ. Գաբրիելյանի կարծիքով՝ վաղ հայկական սկզբնաղբյուրներում մարդերի մասին կան շատ տեղեկություններ, որոնցում նրանք հիշատակվում են որպես առանձին ցեղ[19]*: Որոշակի հետաքրքրություն*

---

[13] *Տե՛ս* **Հերոդոտոս,** *Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Ե., 1986, էջ 259, ծան. 8:*

[14] **Алиев И. Г.** *История Мидии, т. I, Баку, 1960, с. 105, прим. 15.*

[15] **Бартольд В. В.** *Историко-географический обзор Ирана (Сочинения, т. VII, М., 1971, с. 215).*

[16] **Վարդանյան Վ. Ս.,** *Մարդերը Վասպուրականում (ՊԲՀ, 1971, - 3, էջ 50, ծան. 10):*

[17] **Մուշեղյան Ա. Վ.,** *Վասպուրական նահանգի հիշատակումը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, - 5, էջ 4-21):*

[18] **Հարությունյան Բ. Հ.,** *նշվ. աշխ., էջ 383:*

[19] **Габриелян Р. А**. *Армения и Атропатена, Е., 2002, с. 101.*

ներկայացնող այս հարցի լուսաբանման համար կարևորվում է հին աշխարհի երկրների հասարակական կառուցվածքի դիտարկումը: Այսպես, հայտնի է, որ Հին Բաբելոնում տիրապետող դասակարգը բաժանված էր երկու մասի: Առաջինն իշխող խավն էր, որի ներկայացուցիչներն ունեին հայր (=«մարդու որդի» *կոչում): Նույն արտահայտությունը հանդիպում է նաև եգիպտական տեքստերում: Այդ խավի մարդկանց չէր կարելի ուղղակի անունով կոչել, այլ՝ միայն հոր անվան կապակցությամբ (հմմտ. լատ. Patricius, a, um*[20] *= հայր ունեցողներ): Երկրորդ խավը կոչվում էր* մուշկենու: *Նրա ներկայացուցիչներն ունեին ավելի քիչ առանձնաշնորհումներ, որովհետև ներկայացնում էին շումերական հպատակեցված քաղաքների և շրջանների ստրկատերերին*[21]*: Այս հարցի առնչությամբ էական է նաև* մարդ *բառի իմաստին տրված մեկնաբանությունը: Նկատենք, որ «Հնդեվրոպացիները մարդ էակը անուանում էին երկու ձևով. մարդ (մահկանացու)՝ իբր անմահների հակառակը, և երկրածին (հնխ. Ghmon, հմմտ. լտ. Homo «մարդ» և humus («հող»), իբրև երկնայինների հակառակը: Հայերէնի մէջ երկրորդը ջնջուած է, բայց առաջինը կայ և բնիկ է»*[22]*: Ակնհայտ է, որ բարձր դասի ներկայացուցիչների* մարդ *անվանումը կապ չունի մարդ էակի անվան հետ, այլ առնչվում է մարտ «կռիվ, պատերազմ» բառին, որից էլ ունենք մարտնչել, մարտիկ (զինվոր, կռվող), մարտացու «սուր, զենք» և այլ իմաստային տարբերակները: Համարվում է «Բնիկ հայ բառ՝ հնխ. mrd-ձևից, որ կազմուած է հնխ. mera-արմատից՝ d ածականով»*[23]*: Հիշատակելի է, որ հռոմեական մարտ (=հուն. μ ατιος) ամիսը ծագում է լատ. Martius բառից. «բուն ասւում էր martius mensis «մարտ ամիս», որ է «Մարսի Արէսի ամիսը»՝ Mars պատերազմի աստուծոյ անունից… փոխառութեամբ տարածուել է բազմաթիւ լեզուների մէջ»*[24]*: Նույն հասարակական կացությունն առկա է եղել*

---

[20] *Տե՛ս Հին աշխարհի պատմություն, հ. I, Ե., 1938, էջ 137:*

[21] *Նույն տեղում, էջ 137-139:*

[22] **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 279:*

[23] *Նույն տեղում, էջ 289:*

[24] *Նույն տեղում: Ի դեպ՝ բաբելացիները արնակարմիր* Մարս *մոլորակը նույնացնում էին արյունահեղ պատերազմի աստծու՝ Ներգալի հետ, որի անունը թարգմանաբար նշանակում է «ընդարձակ երկրի տեր» (Հին աշխարհի պատմություն, էջ 156): Ըստ հին բաբելացիների դիցաբանական պատկերացումների՝ աստվածների գլուխ կանգնած էր* **Էնլիլը** *կամ* **Մարդուկը**, *որոնց կերպարները երբեմն միահյուսվում էին տիրոջ՝ Բելի կերպարում (տե՛ս История древнего мира, Минск,* [24] *Տե՛ս Հայերեն գավառական բառարան, գրեց Հր. Աճառեան, Թիֆլիս, 1913, էջ 762: 1984, с. 360): Մարդուկն է բնակեցրել երկիրը՝ մարդուն ստեղծելով կավից և օծելով իրեն դավաճանած աստվածներից մեկի* արյունով *(Հին աշխարհի պատմություն, հ. I, էջ 156): Արտաքին նմանությունը թույլ է տալիս կապ տեսնել* Մարդուկ *դիցանվան և հնդեվրոպական ծագում ունեցող* մարդ *անվան*

նաև Հայկական լեռնաշխարհում, որը տեսանելի է մարդ*ով կազմված արտահայտություններում,* Մարդ դառնալ… *«լանալ, զարգանալ, յառաջանալ»,* Մարդու տեղ դնել… *«յարգել, պատուել…»,* Մարդ/ա/մեջ… մտնել՝ *«հասարակութեան առջև ելլել.*-դուրս բերել՝ *արժանի համարել հասարակութեան ներկայացնելու».-ընկնիլ՝ մարդանալ, մարդ դառնալ, մարդու կարգ անցնիլ…* Մարդ/անալ… *արժէք ունենալ, մեծնալ, աճիլ, զարգանալ…, վայելուչ ձևով, լաւ»*[25]*: Բերված փաստերի համադրումից երևում է, որ* մարդը *եղել է* հարգարժան, պատվավոր, բարձր դասի ներկայացուցիչների *անվանում:*

Պատմական իրականությունը ճշգրտորեն վերականգնվում է Խորենացու հաղորդած տեղեկությունների միջոցով, որոնք էական ներդրում են հարցի ուսումնասիրության բնագավառում: Ըստ Հայոց ավանդական պատմության, Վաղարշակ թագավորը «…գունդս և պա-հապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին զարմից թագաւորացն որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս: Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլևս ոմանց յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վասն սպառելով ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք զկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս անուամբ արքունի: Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց, որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Մեփէծուլն կոչի»[26]*:*

Փաստական նյութի քննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Վաղարշակ թագավորին վերագրվող արքունիքի պահպանության համար կազմավորված գնդերը եղել են արքունի մշտական բանակի զորամասեր, որոնք համալրվել են բարձր դասի ներկայացուցիչներից, այն է՝ մարդերից:

Այսպիսով, Հին Հայաստանում մարդերը *եղել են արքայական տոհմի շառավիղներ: Նրանցից հավաքագրված և մշտական զինվորական ծառայության մեջ գտնվող զորամասերը կազմել են արքունի բանակը, որը խաղաղ պայմաններում իրականացրել է արքունի տիրույթների պահպանությունը: Նկատենք, որ 10000 մարտիկներից բաղկացած 4 գնդերի ստեղծումը ենթադրում է նաև նրանց տեղակայման անհրաժեշտությունը:*

միջև: Նկատենք, որ Վանի թագավորությունում նույնպես պաշտվել է այդ աստվածությունը (տե՛ս **Հմայակյան Ս.,** *Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1999, էջ 63-64):*

[25] *Տե՛ս Հայերեն գավառական բառարան, գրեց Հր. Աճառեան, Թիֆլիս, 1913, էջ 762:*

[26] **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց, էջ 111-112:*

Այդպիսի վայրեր են եղել Մարդաղին, Մարդուցայքը, Մարդաստանը *և* Մարդպետականը*: Էական է նաև* մարդ *բառի ստուգաբանությունը:*

Արքունի պահպանության գործը իրականացրել են նաև դրանիկները *(Որ կայ ի դրան արքունի»)*[27]*: Նման օրինակներ հանդիպում են նաև հարևան երկրներում: Հայտնի է, որ Աքեմենյան տերությունում մշտական բանակի միջուկը թագավորական գունդն էր, որը բաղկացած էր ազնվական հեծյալներից և 10000 հետևակայիններից* («անմահներից)*: Պալատում թագավորի անձնական պահակախումբը բաղկացած էր 1000 մարտիկներից*[28]*: Պարսից արքաներն ամեն տարի իրականացնում էին արքունիքի շուրջ տեղակայված զորքերի զորատեսությունը*[29]*: Բացի դրանից, Աքեմենյանների օրոք յուրաքանչյուր սատրապություն ունեցել է հավաքագրած զորքեր և մշտական զինվորական ծառայության մեջ գտնվող զորամասեր, որոնց պարտականություններից էին երկրամասի պաշտպանությունը և բնակչության կառավարումը: Նրանք կազմում էին սատրապության մշտական ռազմական ուժը: Բաբելոնում եղել են ռազմիկներ (=ուրաշտայա), որոնք հայկական սատրապություններից էին և ծառայում էին կայազորներում: Սատրապական Հայաստանում վարձկաններ են համարվել* մարդերը, խալդայները, խալյուբները *և* տաոխները*: Հիշատակվել են նաև հույն, ասորեստանցի, վրկանցի վարձկաններ*[30]*:*

Հարկ է նշել, որ «մ.թ.ա. VII-V դդ. մարդերը հիշատակվում են Իրանական սարահարթը բնակեցնող ցեղերի մեջ, և այդ տարածքից դուրս նրանք հիմնականում հանդիպում են ռազմական արշավանքների ժամանակ կամ դրանից հետո՝ որպես պարսիկների դաշնակից»[31]*:*

Միևնույն տարածաշրջանում բնակվող առանձին ցեղերի անվանումները երբեմն պայմանավորված են եղել տեղանքի կամ բնակության վայրի առանձնահատկություններով, մարդկանց զբաղմունքով, աշխարհագրական և այլ գործոններով, ինչը վկայված է անտիկ հեղինակների երկերում: Այսպես, Սև ծովի հարավարևելյան ափին բնակվող մոսսինոյկներին *հիշատակել են* Հեկատեոս Միլեթացին *և այլ մատենագիրներ: Էթնիկական*

---

[27] *Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Ե., 1979, էջ 642:*

[28] **Авдиев В. И.** *История Древнего Востока, М., 1948, с. 466. Հիշատակության է արժանի այն փաստը, որ Արշակունյաց Հայաստանում նույնպես եղել է նման զորամաս՝ «մատենիկ» գունդ (տե՛ս* **Փաւստոսի Բուզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, Ե., 1987, էջ 32):*

[29] *Նույն տեղում, էջ 467:*

[30] *Տե՛ս* **Тирацян Г. А.** *Некоторые аспекты внутренней организации армянских сатрапий (ՊԲՀ, 1972, № 2, էջ 110):*

[31] **Դանիելյան Է. Լ.,** *նշվ. աշխ., էջ 204:*

անունը հունարեն նշանակում է «փայտե կառույցներում ապրողներ»: *Ընդ որում, չի բացառվում, որ դա տեղական տերմինի՝ հույների կողմից արված ժողովրդական ստուգաբանություն է: Ստրաբոնը այդ նույն ցեղերին անվանում է* հեպտակոմետներ, *որը նշանակում է* «յոթ գյուղերում ապրողներ»[32]: *Ուշագրավ է այն իրողությունը, որ Սև ծովի հարավային ափագծի շրջանում բնակվող* խալյուբները *եղել են երկաթագործ ցեղեր, և նրանց անվանումը կապված է իրենց զբաղմունքի հետ*[33]: *Նույնը կարելի է ասել Հերոդոտոսի հիշատակած պարսկական ցեղերից երկուսի՝* դայերի *և* մարդերի *մասին: Դայերի անունը կապվում է որոշակի մասնագիտության՝ ձիաբուծության հետ: Նկատենք, որ* Ղարադաղի *բարբառում* դայ *նշանակում է* երկու տարեկան քուռակ*: Մեծ Հայքի* Փայտակարան *աշխարհի* Քոեկյան *գավառանունը կապ ունի* քուռակ *(գրբ.* քուռեակ*) բառի հետ և տեղորոշվում է Ղարադաղի* Քեյվան *և* Մինջևան *գավառների սահմաններում, որոնք ունեին հարմար և շահավետ տարածքներ ձիեր պահելու և ձիաբուծությամբ զբաղվելու համար*[34]: *Իսկ* դայ *անունն առկա է նաև սեպագրական շրջանից վկայված* Դայանե *երկրանվան մեջ*[35]:

Այսպիսով, պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հին Արևելքի երկրներում (Եգիպտոս, Բաբելոն, Իրան) մարդեր *անվանումը տրվել է իշխող դասակարգի մի որոշակի շերտի: Մասնավորապես, Հին Հայաստանում* մարդեր *կոչվել են զորքի արտոնյալ մասը կազմող և կայազորում մշտական ծառայության մեջ գտնվող զինվորականության ներկայացուցիչները: Հույն շիտարհագրագետ Ստրաբոնը* Ատրպատականի *թափառական և ավազակաբարո ցեղերի թվում հիշատակել է նաև* ամարդներին, *որոնց նույնացրել է Հայաստանում բնակվող* մարդերի *հետ նրանց անվանումների նմանության պատճառով*[36]: *Դրա հետևանքով բոլոր հետազոտողները դրսևորել են նույն մոտեցումը: Սակայն*

---

[32] *Տե՛ս* **Քսենոփոն,** *Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Ե., 1970, էջ 267, ծան. 27:*

[33] *Տե՛ս* **Հարությունյան Բ. Հ.,** *նշվ. աշխ., էջ 90, 92:*

[34] *Տե՛ս* **Հովսեփյան Հ.,** *Ղարադաղի հայերը, I, Ազգագրություն, Ե., 2009, էջ 208,* **Ղարագյոզյան Ա. Հ.,** *Ղարադաղ [Գավառի պետական համալսարան (ԳՊՀ), գիտ. հոդվ. ժողովածու, 2010, № 12, էջ 148, ծան. 24]: Հայտնի է, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում բանակի կորիզը հանդիսացող «արքայական գնդի» համար մարտական ձիեր են բուծվել և վարժեցվել* Բարի, Սուբի *և* Անիաշտանիա *մարզերում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 38-48, 350):*

[35] Դայանեի *տեղորոշման հարցում կան տարակարծություններ (տե՛ս* **Հակոբյան Թ. Խ., Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Բարսեղյան Հ. Խ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Ե., 1988, էջ 20):*

[36] **Страбон,** *XI, XIII, 494, XV, III, 575-576:*

մարդ *և* ամարդ *անվանումներն իմաստի առումով ունեցել են տարբեր նշանակություններ. բառակազմական մակարդակում դրանք հատանիշներ են, որոնք բնութագրում են տարբեր հանրույթների:* Մարդերը *եղել են դրականորեն բնորոշվող բարձր դասի ներկայացուցիչներ, իսկ* ամարդները *«թափառաշրջիկ և ավազակաբարո» ցեղ: Ակնհայտ է, որ* ամարդ *էթնիկական անվան մեջ* ա *մասնիկը ժխտական նախածանց է (հմմտ. հայ. տմարդի, ռուս. վպս՛ՊՖ): Բացի դրանից՝ մարդերից կազմված գնդերի (=*ոստան *կամ* արքունի*) տեղակայման վայրերի ապակենտրոնացված տեղաբաշխումը նույնպես տպավորություն է ստեղծել մարդերի՝ վաչկատուն լինելու մասին: Դա տեսանելի է Հերոդոտոսի երկում: Ավելին, հանձինս* դայերի, մարդերի *և* գերուսիների[37], *կարելի է տեսնել ոչ թե պարսկական ցեղերի, այլ Աքեմենյան կայսրության մեջ ընդգրկված՝ Հայաստանի առանձին տարածաշրջանների հայ ազգաբնակչությանը:*

Մարդպետի իշխանությունը՝ Մարդպետական գունդը, հանդիսացել է «…նահանգ՝ զինվորական գավառ»[38]: Արժե հիշել, որ եպիսկոպոսական թեմերի՝ 450 թ. ցանկի Մարդաստանը *505 թ. ցանկում կոչվում է* մարպետական*, իսկ 555 թ. ցանկում՝* սեպհական *ու* մարդպետական[39]*: 591 թ. հետո այդ տարածաշրջանը հայտնի էր սեպհական կամ Վասպուրական գունդ անուններով[40], որոնք իմաստի առումով համարժեք են[41]: Հետևաբար, հաստատվում է Հայկական լեռնաշխարհի և հարևան տարածաշրջանների պատմական անվանումներում հանդիպող* մարդ *բառի իմաստային տարբերակների ծագումնաբանական փոխադարձ կապը:*

Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո հայոց արքունական տիրույթները դարձան Սասանյանների սեփականություն: Պարսից արքունիքը Արշակունյաց սեպուհներին հողեր տվեց Տոսպի *և* Մարդպետականի *կողմերում: Մեծաքանակ ազնվականների խավը պետք է զինվորական*

---

[37] *Նշենք, որ Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի Գորայք (>Գորայս> Գորէս>Գորիս) բնակավայրի անունը վկայվել է նաև Գերուսի ձևով (տե՛ս* **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Ե. 1986, էջ 952), որը, անշուշտ, տեղանվան պարսկերեն ձևն է:*

[38] **Մուշեղյան Ա. Վ.,** *նշվ. աշխ., էջ 15:*

[39] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., էջ 368:*

[40] *Նույն տեղում, էջ 369:*

[41] *Հմմտ. «Սեպուհ» («ասպետ, ազնվականության մի աստիճան, գլխաւոր, առաջնակարգ, որից՝ սեպհական «առանձնական, իւրական, իրեն պատկանած-տէր եղած»: Համարվում է իրանական փոխառություն (հմմտ. գնդ. Wiso-pu(ra (իշխանական), տան որդիք (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Ե., 1979, էջ 202):*

ծառայություն կատարեր պարսից արքունիքի համար: Հավաքագրված զորքը կոչվում էր սեպհական *գունդ, իսկ երկիրը* Սեպհական *գնդի երկիր կամ Վասպուրական, որը նշանակել է* հատուկ դիրք ունեցողներ[42]*:*

ВОЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ МАРДОВ В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

КАРАГЕЗЯН А. А.

Резюме

Изучение исторических данных показывает, что в странах древнего Востока (Египет, Вавилон, Иран, Армения) *мардами* назывались представители определенной части правящего класса. В частности, в древней Армении к мардам относились представители воинства. Греческий географ Страбон в числе кочевых племен Атропатены упоминает *амардов*, которых он отождествляет с мардами, живущими в Армении. Подобную точку зрения разделяют большинство исследо-вателей. Однако названия *мард* и *амард* имеют разное смысловое значение. Марды являлись положительно характеризуемыми представителями высшего класса, а амарды были "полукочевым и разбойничьим" племенем. В этническом названии амард частица *а* является отрицательной приставкой (ср. арм. *ոմարդի,* русск. нелюдь). Помимо этого, дислокация полков, укомплектованных мардами в различных частях царского домена, навела исследователей на мысль о кочевом образе жизни мардов.

MILITARY ORGANIZATION OF MARDS IN ANCIENT ARMENIA

A. GHARAGYOZYAN

Abstract

The studies of the historical data shows that in the countries of ancient East (Egypt, Babylon, Iran, Armenia) *mard*s were called the representatives of the certain part of ruling class. Particularly in ancient Armenia *mard*s were related to the representatives of hosts. Greek geographer Strabo mentions *amard*s among the nomadic tribes of Atropatene whom he identifies with the *mard*s living in Armenia. The majority part of investigators share the same point of view. But *mard* and *amard* have different meanings. *Mard*s were positively characterized representatives of the upper class and *amard*s were "nomadic and robber" tribes. In ethnic denomination of amard the particle "a" is a negative prefix (compare Arm. *ոմարդի,* Eng. no human). Besides the dislocation of regiments which were staffed with *mard*s in various parts of royal domains brought investigators to the thought that *mard*s had a nomadic lifestyle.

---

[42] **Հարությունյան Բ. Հ.,** *նշվ. աշխ., էջ 399:*